ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ԲՋՆԻ ՀԱՄԱՅՆՔ

01.09.2014թ.-01.09.2015թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ

Գ.ԲՋՆԻ 2015Թ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2015թ-ի օգոստոսի 25-ին տեղի ունեցավ Կոտայքի մարզի Բջնի համայնքի ղեկավարի հաշվետու ժողովը:

Ժողովում բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Արմեն Մաթևոսյանը, նշելով ,որ ժողովի նպատակը համայնքի ղեկավարի,գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու անդամների կողմից համայնքում իրականացված աշխատանքները համայնքի բնակչությանը ներկայացնելն է:

ՕՐԱԿԱՐԳ

1.Համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության ոլորտում:

2.Համայնքի ղեկավարի գործունեությունը մշակույթի և սպորտի բնագավառում:

3 .Համայնքի ղեկավարի գործունեությունը առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառում:
4.Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքաշինության և կոմունալ ծառայությունների բնագավառում:

5 Համայնքի ղեկավարի գործունեությունը ֆինանսական բնագավառում

6.Համայնքի ղեկավարի գործունեությունը պաշտպանության և քաղպաշտպանության բնագավառում

7.Համայնքի ղեկավարի գործունեությունը գյուղատնտեսության բնգավառում

8.Համայնքի ղեկավարի գործունեությունը առևտրի և սպասարկման ծառայությունների բնագավառում

Ա.Մաթևոսյանի ելույթը՝- հարգելի համագյուղացիներ:

Հաշվետու ժողովը 2014 թ-ի սեպտեմբերից 2015 թ-ի սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում համայնքում իրականացված աշխատանքների վերաբերյալ է:

Համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների ուշադրության կենտրոնում միշտ եղել են կրթության, սոցիալական և կոմունալ տնտեսության, գյուղատնտեսության, քաղաքաշինության, պաշտպանության և քաղպաշտպանության ոլորտներին առնչվող խնդիրները:

Համայնքի բնակիչների հուզող խնդիրների բազմազանությունից ելնելով և դրանց լուծման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ինչպես նաև բնակիչների կարծիքները հաշվի առնելով, գյուղապետարանը որդեգրել է համագործակցության գործելաոճ, միաժամանակ այդ խնդիրների լուծմանը ներգրավելով համայնքային ձեռնարկություններին:

Մշակված նպատակային ծրագրերի , համայնքի ղեկավարի , գյուղապետարանի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների համակարգված գործունեության արդյունքում արձանագրվել է դրական տեղաշարժ համայնքային նշանակության խնդիրների լուծման գրեթե բոլոր ոլորտներում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ենթակայությամբ գործում է մեկ մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպություն՝ երեք խմբով՝ իննսուն սանով: Շեքը ենթարկվել է հիմնական վերանորոգման և ամբողջովին ապահովված է անհրաժեշտ գույքով:

Լուծվել է նաև մանկապարտեզի լոկալ ջեռուցման հարցը:

Համայնքը ջերմ հարաբերությունների մեջ է գտնվում Հայաստանում Լեհաստանի դեսպանատան հետ,որը մի քանի անգամ ներկա է եղել մանկապարտեզում կազմակերպված հանդեսներին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում կարողացանք համագործակցել Հրազդանի ՋՕԸ-ի հետ և ժամանակին վերանորոգվեց համայնքի ոռոգման ջրի ջրատարի 1000մ հատված , ոռոգման ջրի վարձավճարների գանձումները կատարվել են ժամանակին և ամբողջությամբ ,ոռոգման ջրի մատակարարումը կատարվում է առանց մեծ ընդհատումների, համայնքի բնակչները համեմատած նախկին տարիների՝ դժգոհում են հիմնականում ոռոգման ջրի բարձր սակագներից: Համայնքի դաշտամիջյան ոռոգման ջրի « Խաչի թումբ »,« Գյոլի տակ» և տնամերձերի ջրատարները գտնվում են ամնխիթար վիճակում և ունեն վերանորոգման կարիք, իսկ «Ծակ քարի գլուխ » կոչվող հանդամասը ընդհանրապես չունի ոռոգման ջրագիծ ,սակայն համայնքը իր սուղ միջոցներով

հնարավորություն չունի, վերականգնելու քայքայված, շարքից դուրս եկած ոռոգման ջրատարների այդ հատվածները կամ կառուցեու նորը: այս ամենը համայնքի համար առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրներ են: Գյուղամիջյան ոռոգման ջրի համակարգը գտնվում է բարվոք վիճակում և այս տարի ձեռնարկված միջոցառումների շնորհիվ, ոռոգման ջուրը հասանելի դարձավ նաև գյուղի բարձրադիր մասերի բնակիչներին:

2014թվականի աշնանը և 2015թ-ի գարնանը կազմակերպել ենք պետության կողմից տրամադրված դիզ վառելանյութի,գարնանացան գարու, ազոտական պարարտանյութի գումարների գանձման և ներկրման աշխատանքները:

Պետ . պատվերի շրջանակներում համայնքի անասնաբույժի կողմից կատարվում է համայնքի անասնաքլխաքանակի պատվաստումներ: 2014 թ-ի աշնան և 2015 թ-ի գարնան ամիսներին կատարվել են համայնքի անասնագլխաքանակի «Բրոցելյոզ» հիվանդության արյան ստուգման աշխատանքներ և հայտնբերված հիվանդ կենդանիները ենթարկվեցին հարկադիր սպանդի :

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՍՊՈՐՏ

Համայնքի մշակույթի տանը գործում են սպորտային խմբակներ , այս տարի սեպտեմբերի 1-ից , մշակույթի տան վերանորոգված հատվածում, իր աշխատանքային գործունեությունն է սկսելու համայնքի արվեստի և արհեստների ուսուցման կենտրոնը: Գյուղապետարանը դպրոցի ղեկավարության հետ համատեղ իրականացրել է մի շարք միջոցառումներ նվիրված հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 100-ամյակին:Ամեն տարի համայնքում մայիսի 9-ին կազմակերպվում է միջոցառում,իսկ այս տարի առավել եվս մեծ շուքով նշվեց Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 70-րդ տարելիցը, իսկ մայիսի 23-ին Բջնի համայնքում տեղի ունեցավ «Տեսիլք » հուշահամալիրի բացման արարողությունը՝ նվրված Հայաստանի Հանրապետության սահմանների ինքնապաշտպանությանը և Արցախյան ազատամարտին: Գյուղում առաջին անգամ տեղի ունեցավ զորահանդես:

Գյուղի շախմատի թիմը փետրվար ամսին մասնակցել է Աբովյան քաղաքում կազմակերպված Հայաստանի Հանրապետության պատանի շախմատիստների առաջնությանը:

Համայնքում ավանդույթ է դարձել Կոտայք- Բազե մարզային երիտասարդական հավաքի մասնակցությունը՝ յուրաքանչյուր տարի համայնքի առավել շնորհալի յոթ երիտասարդներ ընդգրկվում և մասնակցում են այդ ծրագրին;

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գյուղապետարանը համագործակցված աշխատում է Չարենցավանի զինվորական կոմիսարիատի հետ:Աջակցում է ուսումնավարժական հավաքներին համայնքի զինապարտների մասնակցությունը ապահովելու հարցերում: Փորձում ենք ավանդույթ դարձնել գարնան և աշնան զորակոչիկների համար կազմակերպված միջոցառումը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Համայնքում գործում է ամբուլատորիա, որտեղ աշխատում են բարձրագույն կրթությամբ երեք բժիշկ և միջնակարգ մասնագիտական կրթությամբ երկու բուժքույր: Համայնքում գործում է նաև մեկ դեղատուն, մեկ ատամնաբուժարան:

Սոցիալական ոլորտում ՝ մահացած համայնքի բնակիչների ընտանիքներին համայնքի բյուջեից տրամադրվում է հուղարկավորության նպաստ՝ ոչ պակաս քսան հազար դրամից, որպես օգնություն, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների և բարդ վիրահատություններ տարած բնակիչների դիմելու դեպքում տրամադրվում է դրամական օգնություն, հաշվի առնելով ընտանիքի սոցիալական վիճակը:Այս տարի երկու սոցիալապես անապահով ընտանիքների, համայքի ավագանու որոշմամբ տրամադրվել է վառելափայտ: Համայնքի մանկապարտեզ հաճախող միակողմանի ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների համար սահմանվում ծնողական վարձավճարի զեղչ 50-ից մինչև 100%-ի չափով:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒԹՅՈՒՆ

Համայնքում շինարարություն կատարող և շինարարությունն ավարտած բնակիչներին տրամադրվում են քաղաքաշինության նորմերին համապատասխան փաստաթղթեր:, որով և բնակիչը կարողանում է հանգիստ շինարարություն կատարել կամ այն գրանցել, չունենալով որևէ խնդիր:

Համայնքում գործում է կոմունալ ծառայություններ մատուցող համայնքային ձեռնարկություն ,որը կազմակերպում է կենցաղային աղբի հեռացումը ,փողոցային լուսավորության համակարգի պահպանումը շահագործումըև սպասարկումը, ներ համայնքային ճանապարհների մաքրումը ձմռան ամիսներին և ձնհալից ու հեղեղաջրերից ճանապարհներին առաջացած հողաթմբերից, ինչպես նաև համայնքի գերեզմանոցների պահպանումը և շահագործումը, սակայն համայնքը

չունի գլխավոր հատակագիծ, որի հետևանքով չենք կարողանում գերեզմանոցներում հողհատկացման աշխատանքները ճիշտ կազմակերպել:

Գարնան ամիսներին հարթեցվել են համայնքի նախկին թռչնանոցից խոտհարքներ տանող դաշտամիջյան և ներ համայնքային ճանապարհները:

ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 13 առևտրի օբյեկտ, սպասարկման երկու օբյեկտ, որտեղ գրանցված աշխատում են համայնքի 15 բնակիչներ: Գյուղապետարանը իրականացնում է հսկողություն և ուսումնասիրության արդյունքու հայտնաբերված իրավախախտողներին՝ ենթարկում վարչական պատասխանատվության:

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

2014թ-ի համայնքի բյուջեի կատարման մասին

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	ՊԼԱՆ Հազ.դրամ	ՓԱՍՏ. Հազ.դրամ	ԿԱՏ%
Հողի հարկ	9600.0	9601.9	100.0
Գույքահարկ	9300.0	8962.9	96.4
Տեղական տուրք	300.0	301.0	100.3
Հողի վարձ. վճար	1400.0	1416.0	101.1
Այլ գույքի վարձ.վճար	100.0	84.0	84.0
Ընդամենը	20700.0	20364.9	98.4

.

Լուրջ ու հետևողական աշխատանքի շնորհիվ մաքրվել է համայնքի գույքահարկի բազան: Շահագործումից վաղուց դուրս եկած, օտարված , սակայն դեռևս մեր բազայում մնացած տրանսպորտային միջոցները ճշտվել և դուրս են հանվել, որի շնորհիվ էլ բյուջեի գույքահաարկի ուռճացված թիվը կարգավորվել է: ԵՎ այժմ բյուջեի մուտքերի կատարումը դարձել է ավելի իրատեսական:

Վարչկան մաս

ԾԱԽՍԵՐ	ՊԼԱՆ Հազ.դրամ	ՓԱՍՏ. Հազ.դրամ	ԿԱՏ%
Տեղական ինքնակառավարում	24115.3	24006.3	99.5
Նախադպրոցական կրթություն	14000.0	14000.0	100.0
Ընդհանուր բնույթի հանրային այլ ծառայություններ	9200.0	9200.0	100.0
Սոց հատուկ արտոնություներ	1900.0	1845.0	97.1

Մշակութային այլ կազմակերպություններ	272.0	272.0	100.0
Պաշտպանություն,արտակարգ իրավիճակներ,քաղաքացիական պաշտպանություն	750.0	100.0	13.3
Ընդամենը	50087.3	49423.3	98.6

.Ֆոնդային մաս

ԾԱԽՍԵՐ	ՊԼԱՆ Հազ.դրամ	ՓԱՍՏ. Հազ.դրամ	ԿԱՏ%
Փողոցների լուսավորում	717.5	717.5	100.0
Ավտոկանգառներ տաղավարների ձեռք բերում	1000.0	990.0	99.0
ԸՆԴԱՄԵՆԸ	1717.5	1707.5	99.4

Ժողովի վերջում մասնակիցները հարցերով և առաջարկություններով դիմեցին համայնքի ղեկավարին: Համայնքի ղեկավարը պատասխաանեց բնակիչների հարցերին, իսկ համայնքին վերաբերող առաջարկությունները ընդունվեցին:

Ժողովի օրակարգային հարցերն սպառվեցին, ժողովն հայտարարվեց փակված:

Invalid signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ